

չտարուէր: Ու այս պարագան հողերանակա-
նօրէն եւս կը դորացնէ թրքութիւնն ու թուրք
աղբային շարժումը, Մուսթաֆա Քեմալին եւ
իր ղինակիցներուն՝ կորսուած նահանգներու
եւ շրջաններու փոխարէն, գոնէ եղածը ամուր
եւ անվկանդ պահելու ազահութիւնն ու վճիռը
պարտադրելով:

Արթնցող թրքութիւնը, աշխարհածաւալ
կայսրութենէ մը ժառանգ մնացած իր հայրե-
նիքին պաշտամունքն ու նուիրումը, զերազան-
ցօրէն սարսուցուց: Եւրոպայէն մինչեւ Ամե-
րիկա եւ խաւարակուռ Ասիայի գունաւոր ցե-
ղերն իսկ տեսան ու զնահատեցին Քեմալը եւ
իր ցնցող աստղը: Հայ քաղաքական միտքը
ինչո՞ւ այնչափ ժլատ է իրողութիւններու հան-
դէպ եւ անհաշտ:

Ընկ. Ռուբէն քմահաճոյքով կ'ուզէ վեր-
լուծել անառարկելի դէպքերն անգամ: Չէ՞ որ
կայսրութեան կրճատման հետ մահմետական
դադթականութեան շարաններ ու կարաւաններ
եկեր հետեւեր են մահիկին եւ չեն ուզած «ա-
զատագրուած» երկիրներու քաղաքացիներ
դառնալ, այս պտածաւոր ալ լքելով անհաշ-
ւելի հարստութիւններ ու բարւոք կեանքի
հնարաւորութիւններ:

Թուրք զեկավարութիւնը այնքան է ուշիմ
եղած, որ լախօրէն շահագործած է այդ գաղ-
թականներուն կրօնական նախապաշարումներն
ու հաւատալիքները, անոնցմէ դատարկելու
համար կորսուած հողամասերը եւ լեցնելու
փրկուած հայրենիքը:

Քեմալական եւ նախորդ կառավարու-
թիւնները անհաղորդ չեն եղած գաղթականնե-
րով երկիրը բնակեցնելու եւ չէնցնելու իմաս-
տութեան: Պալքանեան պատերազմէն ի վեր
650,000 գաղթական մտած է թուրքիա («Վա-
զըթ»): Էնկիւրին սիսքէմարիք կերպով կը
հետապնդէ հարցը, թուրքեր բերելով Կիպրոս-
աէն, Յունաստանէն, Պուլկարիայէն, Սերպի-
այէն, Կովկասէն եւ ուրիշ որ կարելի է, այս
նպատակին համար պահելով տեղաւորման
ընդհ. տեսչութիւն մը, յատուկ պաշտօնէն-
թեամբ: Ծրադիր կայ 5-600,000 թուրքեր Ռու-
սիայէն փոխադրելու, որուն համար քուէարկ-
ուած են կարեւոր գումարներ:

1927 Ապրիլ 10-ին, Աղբային Մեծ Ժողո-

վին մէջ, ներքին դործավար ձէմիլ պէյը կը
յայտարարէր՝ թէ Գաղթականներու Ձեռնդ-
ման Տեսչութիւնը իր կազմութենէն սաղին
տեղաւորած է 124,000 ընտանիք, կամ 438-
000 հոգի:

Ասիկա ազգահաւաքն է, փառաւոր տեսա-
կէն, որուն փոխարէն հայութիւնը դժբախտա-
բար չունի իր սեփական քաղաքականութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան կառա-
վարութեան զեղեցիկ ցանկութիւնները եւ ա-
ռաջադրութիւնները չէին պակսեր, բայց ան
ժամանակ չգտաւ գործի վերածելու զանոնք:
Երեւանի բոլշեւիկ փնդկատակներն ալ ոչ մի-
այն ազգահաւաքման մասին չեն մտածեր, այլ
կը թելադրեն թրքահայ բեկորները քշել Ռու-
սաստանի խորքերը, որպէսզի հայ «պուրժու-
ական» եւ «հակայեղափոխական» երազները ի
զերեւ ելլեն:

Ութը տարուան ընթացքին հազար ու մէկ
գլուարութիւններով ու սակարկութիւններով
Հայաստան ընդունուած 25,000 հայերու պա-
րագան՝ ակնաբախ չափանիշ մըն է հայ եւ
թուրք առաջաւոր շրջանակներու պետական ու
աղբային ըմբոստութեան: Թուրքը կը լեցնէ
իր հայրենիքը, երբ մենք ոչ միայն չենք կըր-
նար նոյնը բնել նոյն չափով (որովհետեւ ա-
զատ պետութիւն չունինք մեր իղձերուն ըն-
թացք տալու համար), այլ ակնատես ենք
այսօրուան Հայաստանի բնակչութեան նօս-
րացումի աղաղակող փաստին: Վերջին բոլշե-
ւիկեան վիճակագրութիւնը ցոյց կուտար, որ
մէկ տարուան մէջ 60,000 հայ պակասած է Հա-
յաստանի բնակչութեան թիւէն, առանց հաշ-
ուելու բնական աճեցողութենէն զոյանալիք
20-25,000 յաւելումը դոնէ, որ յիշեալ ժամա-
նակամիջոցի կորուստը կը հասցնէ 80-85,000-ի
աղէտալի գումարին:

Հայրենիքի դադափտըին մզումս լ Քեմա-
լականները ամէն կերպ կը նկրտին դորացնելու
Թուրքիան: Արտասահմանէն գաղթական հրա-
ւիրելու քաղաքականութիւնը բնաւ չօչափելի
արդիւնք մը չէր տար, եթէ փոխադրուող եւ
զեռեղուող տարրը ինք շահագրգռուած չըլ-
լար անով: Ու այս շահագրգռութիւնն ալ ա-
մուր եւ անասան հայրենիքի փնտաւորէն
ստաջ կուգայ՝ Սերպիան եւ Պուլկարիան,